Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների վերապատրաստում

Հետազոտական աշխատանք

Թեմա՝Ավագ նախադպրոցականի գեղարվեստախոսքային(հանդեսներ,տոնակատարություններ)գործունեության մանկավարժական պայմանները:

Վերապատրաստվող՝Մարինե Աբգարյան

«Արագածի մանկապարտեզ»ՀՈԱԿ

Վերապատրաստող՝Նարինե Սահակյան

Բովանդակություն

Գլուխ1- Ավագ նախադպրոցականի գեղարվեստախոսքային
(հանդեսներ,տոնակատարություններ) գործունեության մանկավարժական պայմանները:

Ներածություն(էջ4-5)

1.1Տոներ,Զվարճություններ(5-6)

1.2Երեխայակենտրոն ուսուցում(էջ6-7)

1.3Խաղի դերն ու նշանակությունը(էջ13-15)

Գլուխ2 Գործնական մաս(էջ7-12)

Եզրակացություն(էջ16

Օգտագործված գրականեության ցանկ

Գրականություն

1 Տոնական ողողանջներ

հեղ.Լալա Սմբատյան

2 Այլընտրանքային մոդելներով 5-6 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության կազմակերպումը

հեղինակներ՝Ռ.Ծառուկյան, Հ.Միտոյան,Լ.Սմբատյան,Ն.Նիկողոսյան

Ավագ նախադպրոցականի գեղարվեստախոսքային (հանդեսներ,տոնակատարություններ)գործունեության մանկաբարժական պայմանները:

Ներածություն.

Երեխաների զարգացմանը ,ինչպես նաև նրա անձնավորության ձևավորմանը նպաստող խթանները պայմանականորեն միավորում են երեք խմբի՝կենսաբանական,սոցիալական և մանկավարժական:

Մանկավարժական գործերի շարքին է պատկանում երեխաների ինքնուրույն գործունեությունը, որը խրախուսվում և ձևավորվում է մեծահասակների մանկավարժական ներգործության շնորհիվ:Երեխաների ինքնուրույնության արգելակումը մեծահասակների կողմից բացասաբար է անդրադառնում և խոչնդոտում է նրա ընդհանուր զարգացման գործընթացը:

Երեխաների ինքնուրույնությունը՝ նրա զարգացման և անձնավորության ձևավորման կարևորագույն գործոնն է:Երեխաների զարգացման գործընթացում բավական պատասխանատու է մանկավարժական գործոնների դերը:

1.1Տոներ,զվարճություններ

5-6 տարեկան երեխաների հետ տարվող կրթադաստիարակչական աշխատանքի ծրագրում իրենց ուրույն տեղն են զբաղեցնում գրավիչ ժամանցը,զանազան մարզական զվարճություններն ու տոնահանդեսները:

Աշխարհի ժողովուրդների նկատմամբ դրական վերաբերմունքի ,բազմամշակույթային դաստիարակության հիմքերը դրվում են ազգայինի մեջ համամարդկայինը ընդգծելու միջոցով:Երեխայի բարոյագեղագիտական դաստիարակությունը պետք է իրականացվի համընդհանուր ,համամարդկային արժեքների հետ շփման միջոցով:Երեխայի բարոյագեղագիտական դաստիարակությունը պետք է իրականացվի համընդհանուր ,համամարդկային արժեքների հետ շփման միջոցով:Դրանք բացահայտվում են ազգային մշակույթին՝գրականությանը,արվեստին,երգերին,առածներին,ասացվածքներին երեխայի ծանոթացման ընթացքում:Արվեստի աշխարհն իր բազմազանությամբ և հարստությամբ պետք է կապվի երեխայի կյանքին:

5-6 տարեկան երեխաների բարոյական դաստիարակությունը հիմնականում իրականացվում է առօրյա կյանքում:Երեխայի ամենօրյա զբաղմունքը և նրա գործունեության ձևերը հնարավորություն են տալիս դրսևորել անմիջական վերաբերմունք նրան շրջապատող իրականության նկատմամբ,օգնում են դաստիարակել բարոյականային հատկանիշներ:

Մանկավարժության բազմաթիվ հարցադրումների շարքում առանձնանում է երեխաների որոշակի տարիքային խմբի համար կազմակերպվող միջոցառումների հարցը:Եթե առաջնորդվենք այն սկզբունքով,որ կրթության մեջ կարևորը երեխայի անհատականությունը պահպանելն է ու նրա ճաշակը զարգացնելը,ապա միջոցառումների կազմակերպումը պահանջում է նոր մոտեցումներ.

.Միջոցառման կազմակերպման անհրաժեշտությունը պետք է հասունանա ,այլ ոչ թե պարտադրանք ու հոգս դառնա երեխայի համար:Երեխան սպասի այդ տոնին:

.Միջոցառումը երեխայի համար պետք է լինի անակնկալներով լի,գրավիչ և հետաքրքիր:

.Միջոցառման նպատակը կարող է լինել երեխայի ձեռքբերումների նշումը,նրա տարբեր հմտությունների զարգացումը (ինքնավստահություն,ազատ շփվելու,ներկայանալու և ներկայացնելու,շրջապատը զգալու և գնահատելու կարողությունը):

.Տոներին ,զվարճանքներին ու ծեսերին պետք է մասնակցեն բոլորը:Երեխան ոգևորվում է,երբ իր կողքին տեսնում է երգող մեծահասակներին և ընկերներին:Երկարատև վարժանքների և փորձերի կարիք չկա:

Կարևոր է,որ երեխաները պարզապես միասին նշեն ,հաճույք ստանան,պատմեն միմյանց,թե ինչպես են այդ տոները նշում իրենց ընտանիքներում:Այդպիսով նրանք տնից ուսումնական հաստատություն և ուսումնական հաստատությունից տուն են փոխանցում տոնը/ծեսը/:Երեխան դառնում է ոչ միայն տեղեկատվություն սպառող,այլ նաև տեղեկատվության աղբյուր:

.Շատ կարևոր է ապահովել երեխայի մասնակցությունը տոնական սեղանների,խորհրդանիշների,նվերների,բացիկների պատրաստմանը:

Երեխաների համար կազմակերպվող յուրաքանչյուր միջոցառում ,տոնահանդես,ազգային եկեղեցական ,ժողովրդական տոներին նվիրված ցերեկույթ,մարզական խաղ ու զվարճություն նպաստում է երեխայի գիտելիքների,հիշողության,երևակայության,ստեղծագործ մտքի զարգացմանը և նրա անձի ձևավորմանը:

5-6 տարեկան երեխայի կյանքում հաճելի իրադարձություն է դպրոց ընդունվելը,որին նվիրվում է հատուկ ցերեկույթ(հանդես):Այդ հանդեսին երեխաները պատրաստում են իրենց ստեղծագործական աշխատանքների ցուցահանդեսները:

Ստորև ներկայացվող տոները,նշանավոր տարեթվերը ,ավանդական միջոցառումները նպատակ ունեն հուշելու մանկավարժներին,թե ինչպես պետք է նապապատրաստվել առաջիկա տոնահանդեսին:Բացի նշված օրերից,յուրաքանչյուր ուսումնական հաստատություն կարող է ունենալ իր ավանդական տոնական օրը,ցուցահանդեսները,թեմատիկ և հաշվետու հանդեսները և այլն:

Յուրաքանչյուր միջոցառում պետք է ունենա իր առանձնահատուկ նպատակը,ձևը և գրավչությունը:Ուստի դաստիարակները միջոցառմանը պետք է նախապատրաստվեն հանգամանորեն՝հաշվի առնելով տեղական պայմանները,եղած հնարավորությունները:

Տոնացույց

.Երեխայի ծննդյան օրերը

.Հունվարի 28.Հայոց բանակի օր

.Փետրվարի 22.Վարդանանց օր

.Մարտի 8.Մայրիկների տոն;Գարնան տոն

.Տեառն ընդառաջ

.Բարեկենդան

.Ծաղկազարդ կամ ծառազարդ՝նվիրվում է գարնան զարթոնքին

.Զատկի տոն

.Համբարձման տոն

.Հունիսի 1.երեխաների պաշտպանության միջազգային օր

.Հունիսի 15-20.կարելի է անցկացնել միջոցառումներ՝նվիրված սաներին դպրոց ճանապարհելուն

.Սեպտեմբերի 1 .Դպրության և գիտության օր

.Հոկտեմբեր.«Ոսկե աշուն»

.Հոկտեմբեր.«Ուսուցչի օր»

.Սպորտլանդիա(գարնանային,աշնանային)

Բացի նշված օրերից,ավանդաբար անցկացվող միջոցառումներից են՝«Ցտեսություն ձմեռ»,«Ողջույն ամառ»,«Բերքի տոն»,«Թռչնի օր»,որոնք պետք է կազմակերպել տարվա համապատասխան եղանակին:Կազմակերպել կարճատև արշավներ,զբոսանքներ ձմռանը,«Առողջության շաբաթներ»,«Վազորդի օր»:

Հնարավորության դեպքում կազմակերպել դահուկներով կամ սահնակներով մրցույթ և այլն:Նման միջոցառումները պետք է ուղեկցվեն երաժշտությամբ,համապատասխան կահավորմամբ և զարդարանքով:Երեխաների կյանքում մեծ իրադարձություն են ինքնագործունեության համերգները,տիկնիկային և ստվերային թատրոնները,կինոֆիլմերի և դիաֆիլմերի դիտումները՝համառոտ և մատչելի բացատրություններով:

1.2Երեխայակենտրոն ուսուցում

Ուսուզման գործընթացը փոխներգործություն է, որի արդյունավետությունը պայմանավորված է մանկավարժական հաղորդակցման ոճով, երեխաների և մանկավարժների փոխհարաբերությունների որակով:Մանկավարժները երեխաների համար պետք է նախապատրաստեն միջավայր, որտեղ նրանք սովորեն ակտիվ հետազոտության միջոցով՝ փոխգործելով մեծահասակների, երեխաների և նյութերի հետ:Նյութերի և մարդկանց հետ փոխգործողության արդյունքը սովորելն է:Մանկավարժական սկզբունքները և մանկավարժի աշխատանքի ուժը պայմանավորված են հասարակության կողմից ներկայացվող պահանջներից, կրթական համակարգի ռազմավարությունից և գերակա խնդիրներից:Ներկայումս՝ հասարակության զարգացման ժողովրդավարական սկզբունքների հաստատման ճանապարհին, անհրաժեշտություն է դարձել ուսուցման նոր մեթոդների ներդրումը:Այն դարձել է ժամանակի պահանջ:Ետ են մղվել մանկավարժական ինքնիշխան

/ավտորիտար/ և հարմարվողական/լիբերալ/ ոճերը, որոնց համապատասխանում էին ուսուցման կարգապահական և հրահանգային մեթոդները:Բնականաբար, կառուցվող ժողովրդավարական հասարակությունը պիտի նախընտրեր ժողովրդավարական մանկավարժական սկզբունքները և վերանայեր ուսուցման կազմակերպման եղանաակը:

Ուսումնական գործընթացի ժողովրդավարացմանը համապատասխանում է ուսուցման երեխայակենտրոն մոդելը:Նշված մոդելի նպատակն է ուսուցման ընթացքում յուրաքանչյուր երեխայի անկրկնելիության անհատականության բացահայտումը և նրա անձի զարգացման խթանումը:

Երեխայի ակտիվ մասնակցությունը ուսումնառության գործընթածցին ապահովելու համար կիրառվում են ուսուցման փոխգործուն մեթոդներ, որոնց միջոցով

.երեխաների հետ երկխոսություն և համագործակցություն է հաստատվում,

.ստեղծվում է փոխըմբռման մթնոլորտ, որի արդյունքում ուսուցումը կառուցվում է ոչ թե ցուցադրումների և բացատրությունների,այլ ուսումնական գործունեության մեջ բոլոր երեխաների անմիջական ներգրավման միջոցով:

.աշխատանքային պլանը կառուցվում է երեխայի նախասիրությունների և հետաքրքրությունների հիման վրա,

.խրախուսվում է երեխաների ինքնուրույն փորձարարական գործունեությունը,

.ուսուցման ընթացքում շեշտը դրվում է երեխայի ինքնակառավարման կարողության զարգացման վրա,

.ուսուցումը կազմակերպվում է համագործակցային մթնոլորտում, որ և՛ երեխան,

և՛ դաստիարակը նույն հարթության վրա են և հանդես են գալիս գործունեության սուբյեկտների դերում:Դաստիարակը խորհրդատու է, ուղղորդող, օգնական և ավագ ընկեր:

Գլուխ 2.Գործնական մաս

Մանկապարտեզում նշվում են զանազան տոներ և միջոցառումներ՝նպատակ ունենալով երեխաների մեջ որոշակի գիտելիքներ սերմանելու:Միջոցառում կազմակերպելուց առաջ ունենում ենք հստակ ծրագիր,ընդհանուր քննարկումների միջոցով(երեխաների հետ)որոշվում է՝որ երեխան ինչ խոսք և դեր է ունենալու:

Մանկապարտեզում հաճախակի նշվող տոներից է Զատկի տոնը:

Զատիկը շարժական տոն է,այսինքն յուրաքանչյուր տարի նրա նշման օրը փոխվում է:Հայ առաքելական եկեղեցին այն նշում է գարնան գիշերահավասարին հաջորդող լիալուսնի առաջին կիրակի օրը,որն ընկնում է մատի 21-ից հետո մինչև ապրիլի 25-ը (35օր)ժամանակահատվածի վրա:

Զատկին նախորդում է Ավագ շաբաթը:Զատկի հետ առնչվող գլխավոր արարողությունները սկսվում են Ավագ շաբաթվա շաբաթ օրը և ավարտվում երկուշաբթի:

Ժամերգություն է տեղի ունենում և պատարագ մատուցվում բուն զատկական կիրակի օրը:Զատիկը հինգ տաղավար տոներից մեկն է:

Երեխաները միջոցառմանը հագնում են համապատասխան և համահունչ հագուստ:

Սկսում ենք տերունական աղոթքով:

Հայր մեր

Հա՛յր մեր,որ երկնքում ես,

Սուրբ թող լինի քո անունը,

Քո արքայությունը թող գա,

Քո կամքը թող լինի երկրի վրա,

Ինչպես որ երկնքում է:

Մեր հանապազօրյա հացը

Տու՛ր մեզ այսօր.

Եվ թո՛ղ մեզ մեր պարտքերը,

Ինչպես և մենք ենք թողնում

Մեր պարտապաններին:

Եվ մի տանիր փորձության

Այլ փրկի՛ր մեզ չարից,

Քանզի քոնն է արքայությունը

Եվ զորությունը և փառք հավիտյանս հավիտենիս ամեն:

Այնուհետև երեխաները ուսանավորների միջոցով իրենց գիտելիքներն են փոխանցում հյուրերին և ներկաներին:Ամենայն մանրամասնությամբ ներկայացնում են զատկի տոնը և զատկի խորհուրդը:

Նախադպրոցականների շրջանում ամենաուրախ և «թաց» տոներից է

Վարդավառը:Վարդավառը քրիստոնեական տաղավար տոներից է:Ըստ եկեղեցական տոնացույցի՝նշվում է Զատիկից 14 շաբաթ կամ 98 օր հետո,կիրակի օրը՝հունիսի 28-ից օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածում:

Հայաստանի շատ բնակավայրերում,սակայն,տեղական ավանդույթի համաձայն,Վարդավառը նշվում է այլ օրերի՝հուլիսի կեսերից մինչև օգոստոսի սկիզբը:

Վարդավառը հայկական ավանդական տոների շարքում ամենասիրելիներից մեկն է,ամառային ամենասիրված տոնը:Քաղաքներում Վարդավառն ավելի շատ համարվում է մանկական տոն ,երեխաներն հենց այդպես էլ ասում են«ջրոցի խաղալ»,այսինքն՝ուրախ ջրել անծանոթներին և անցորդներին:

Վարդավառի մասին նույնպես երեխաները տեղեկացված են և տիրապետում են տոնի մանրամասներին:

Վարդավառ է,լույսի տոն,

Տոն՝հրաշքի Թաբոր լեռան

Ուր Տիրոջ հետ երեք անձեր

Սուրբ լեռ աղոթելու ելան

Աղոթելիս Տիրոջ դեմքից՝

Արքայության լույս ճառագեց

Եվ հանդերձները Հիսուսի

Ճլացնող լույսով պատվեց:

Միջոցառման մի մասնիկ է կազմում նաև փոքրիկ բեմականացում:

Նոյյան տեսարան

Ժողովրդական մեղմ,հանդարտ երաժշտության ներքո հարթակ են մտնում ավետաբեր աղավնիներ ներկայացնող երեխաները:Աղավնու դերակատարներից մեկը,թևերը թափահարելով,բարձրաձայն արտասանում է,կամ խումբը՝երգում:

Խումբ.երգ՝«Տեսեք աղավնին»

Տեսեք աղավնին Նոյյան տապանին

Եկած ու կանգնած ի սար Մասիսին

Ավետիս կուտա Հայկա սերունդին

Թե եկավ գարուն Թորգոմա զարմին:

Աղավնի1 -Ջրերը քաշվե՛լ է,

-Մասիսը բացվե՛լ է

-Աղավնին ետ է եկել,

-Մեծ ավետիս է բերել

Աղավնի2 -Նոյ նահապետն իջել է,

-Աշխարհը շենացել է

-Կյանքը նոր ի նորել է

-Մարդոց սիրտը

Փակվել է:

Աղաղվնի3 -Ջերմացել է արևը

Բերքատվել է մեր

Հողը

Ցորեն բարձրացել է

Քաղցրացել է

Խաղողը

Կարմիր նուռը

Ճաքել է

Ջրերը վարարել են:

Երգի ընթացքում հարթակ է մտնում Նոյ նահապետը կնոջ,երեք որդիների և երեք հարսների դերակատարների հետ:Աղավնիներից մեկը ձիթենու շիվը բերանին մոտենում է Նոյյի դերակատարին:Նոյյը վերցնում է շիվը աղավնուց և փառք տալիս Աստծուն:

Նոյ նահապետ-Փա՛ռք քեզ,Տեր,որ փրկեցիր մեզ:Քառասուն օր ու քառասուն գիշեր տապանը լողաց ջրերի վրա:

Վերջապես անձրևը դադարեց ,ջրերը սկսեցին ցամաքել և տապանը դիպավ Արարատ լեռանը ու նստեց գագաթին՝Հայաստան աշխարհում:Մեզ հետ տապանից դուրս ելան երկրի բոլոր գազանները,բոլոր սողուններն ու բոլոր թռչունները:

Սեմ-Հա՛յր,այստեղից էլ պետք է նոր կյանք սկսվի:Մարդիկ պետք է ապրեն Աստծու պատվիրաններով,որպեսզի Աստված օրհնի և աշխարհը խաղաղ լինի:

Քամ-Այս հողն էլ թող օրհնվի,բերքն ու բարիքն էլ առատ լինի:

Նոյ նահապետ-Սեմ,Քամ և Հաբեթ Աստված Ուխտի ծիածան կապեց մեզ հետ և ասաց.

«Աճեցեք,բազմացեք,լցրե՛ք երկիրը և բազմացե՛ք դրա վրա»:

Ես հողագործ մարդ եմ և հենց այստեղ ցորեն կցանեմ,խախողի այգի կտնկեմ,ծիրան ու նուռ կաճեցնեմ:

Հաբեթ-Հայր,քո օրհնությամբ և եղբայրներ ձեր աղոթքներով ես կմնամ այստեղ և կշենացնեմ այս հողն ու երկիրը:

/Նոյյը և իր տղաները բաց են թողնում աղավնիները և իջնում են հարթակից,գնում/

Արդեն միջոցառման վերջում երեխաները վերցնում են ջրով լի շշեր:Նրանցից երկուսը,առանձնանալով խմբից,վազելով գալիս են կենտրոն և հայտարարում ջրոցիի սկիզբը:

-Արծաթե թա՛ս,ոսկի ջու՛ր

-Մեկ թաս կուզե՛մ,երկու տու՛ր

-Վարդավա՛ռ,վարձքդ կատա՛ր

-Վարդավառ վարձքդ կատար:

Դաստիարակ-Իսկ այժմ մեր փոքրիկները կկատարեն Վարդավառի Անդաստանի կարգը: /Առաջ են գալիս չորս տղաներ/

Երեխա1-Արևելյան կողմն աշխարհի

Խաղաղություն թող լինի

Երեխա2-Արևմտյան կողմն աշխարհի

Բերրիություն թող լինի...

Երեխա3-Հյուսիսային կողմն աշխարհի

Առատություն թող լինի...

Երեխա3-Հյուսիսային կողմն աշխարհի

Առատություն թող լինի...

Երեխա4-Հարավային կողմն աշխարհի

Պտղաբերում թող լինի...

Դ.Վարուժան/Անդաստան/

Եվ վերջում երեխաները,ՆՈՒՀ-ի մանկավարժները և հյուրերն դուրս են գալիս բակ և «ջրոցի» խաղում:

Մանկապարտեզում մեծ դեր ունեն նաև հայրենիքին նվիրված միջոցառումները:Դեռ նախադպրոցական տարիքից երեխաների մեջ սերմանում ենք սեր հայրենիքի հանդեպ,և պատասխանատվության զգացում առ հայրենիք:Ամենազեղեցիկներից են սեպտեմբերի 21-ին(անկախության օր),հունվարի 28-ին(բանակի ստեղծման օր),մայիսյան եռատոնին նվիրված միջոցառումները:Եվ հատկապես հիմա,այս դժվարին ժամանակներում,երեխաների մեջ պետք է բարձր պահվի հայրենիքի հանդեպ սերն ու նվիրումը:

Փառք ու պատիվ բոլոր ժամանակների մեր հերոսներին..

1.3Խաղի դերն ու նշանակությունը

Ուսուցման գործընթացն իրականացվում է տարբեր մեթոդների օգնությամբ:Մեթոդը նպատակին հասնելու միջոց է,ուղի:Այն գործիք է դաստիարակի համար իր կրթադաստիարակչական նպատակներին հասնելու ճանապարհին:

Ներկայումս նապադպրոցական կրթության դիդակտիկայում լայն տարածում են գտել ուսուցման ժամանակակից մեթոդներ՝խաղային,գործնական,ակտիվ ուսուցման մեթոդները:

Խաղային մեթոդների առավելությունները պայմանավորված են խաղային մթնոլորտի բարձր հուզականությամբ,երեխայի համար խաղի բնական և հոգեհարազատ բնույթով:

Ուսուցանող են խաղի բոլոր տեսակները,որոնք կատարում են երկու կարևոր գործառույթ.

-Նպաստում են գիտելիքների ամրապնդմանը և խորացմանը,

-խթանում են նոր գիտելիքների ամրապնդմանը և խորացմանը,

-Խթանում են նոր գիտելիքների արդյունավետ յուրացումը:

Խաղի յուրաքանչյուր տեսակ երեխայի զարգացմանը նպաստող ուրույն մեթոդ է:Հետաքրքիր խաղային մեթոդ է երեխայական իրադրությունների խաղարկումը,որի ընթացքում երեխան գիտելիքներ և կարողություններ է ձեռք բերում դերային գործողությունների միջոցով:

Ուսուցման գոործնական մեթոդների խմբին են դասվում տարատեսակ վարժությունները,փորձերը,հետազոտությունները և մոդելավորումը:

Ակտիվ ուսուցման մեթոդները նպաստում են երեխաների ազատ և ինքնուրույն մտածելու,սեփական կարծիք հայտնելու,պատասխանատու որոշումներ կայացնելու,ընտրություն կատարելու հմտությունների զարգացմանը,ճանաչողական գորընթացում ինքնուրույն կողմնորոշմանը:Այդ մեթոդները զույգերով,խմբով մտավոր աշխատանքի եղանակներն են՝ուղղված համատեղ որոնումների և մտորումների քննարկմանը,ընդհանուր որոշումների կայացմանն ու իրագործմանը:

ՈԻսուցման փոխգործուն մեթոդները համապատասխանում են երեխայակենտրոն ուսուցման սկզբունքներին և արդյունավետ են:

Փոխգործուն մեթոդները բացառում են որևէ մեթոդի առաջնայնությունը ,ինչպես նաև մեկ մեթոդի գերակշռությունը մյուսների նկատմամբ:

Փոխգործուն ուսուցման սկզբունքներն են.

-փոխազդեցությունը,փոխուսուցումը

-երեխայի ակտիվությունը,

-համագործակցությունը,

-ինքնարտահայտման խրախուսումը

-հետադարձ կապը

Փոխգործուն մեթոդների առանձնահատկություններն են.

-երեխայի իմացական գործընթացների կազմակերպումը

-հետաքրքրությունների բացահայտումը

-համագործակցային կարողությունների բացահայտումը

-հաղորդակցական ունակությունների ձևավորումը

-տրամաբանական մտածողության զարգացումը

-ինքնուրույնության խրախուսումը

-վերլուծական կարողությունների ձևավորումը

Խաղը երեխայի աշխատանքն է,որի ընթացքում նա ձեռք է բերում չափազանց կարևոր հմտություններ:Դաստիարակները պետք է երեխայի օրվա խաղային հատվածը դիտարկեն որպես ուսումնական ծրգրի շատ կարևոր մաս:Երեխաները շատ բան են սովորում խաղի միջոցով:Խաղի ընթացքում երեխաները ձեռք են բերում հմտություններ,որոնք նրանց համար շատ օգտակար են լինում կյանքի ընթացքում ավելի բարդ հմտություններ յուրացնելիս:Խաղի ընթացքում երեխան հաջողության զգացում է ունենում,երբ ներքաշվում է իր իսկ սահմանած առաջադրանքի մեջ,ինչպես ,օրինակ՝ընկերոջ հետ միասին ճանապարհ հարթել արգելքների միջով կամ տարբեր ամաններ ջրով լցնել և դատարկել:Նման գործողությունները չպետք է սահմանափակվեն մեծահասակների կողմից ճիշտ կամ սխալ,լավ կամ վատ գնահատականներով:Երեխաները պետք է խաղան իրական առարկաներով և բնական իրավիճակներում ,մինչև ի վիճակի կլինեն հասկանալ տառերի,թվերի,այլ խորհրդանիշների նշանակությունը և իմաստը:

Խաղի միջոցով երեխաները սովորում են

.մարդկանց,կենդանիներին և առարկաներին բնորոշ հատկանիշները

.զարգացնել իրենց ստեղծագործական կարողությունները

.զարգացնել պրոբլեմներ լուծելու իրենց հմտությունները

.սոցիալական հմտություններ

.հմտություններ զարգացման բոլոր ոլորտներում

.հաճույք զգալ,ուրախանալ

Նախադպրոցական տարիքում խաղի միջոցով զարգանում են նաև երեխաների սոցիալական շփման հմտությունները:

Խաղը հնարավորություն է տալիս համատեղ խաղալ խաղալիքներով և առարկաներով գործնական,կառուցողական և երևակայական խաղերում,սովորել տեքստեր և համագործակցել դերային խաղերում,հերթ պահպանել ու հետևել խաղի կանոններին և այլն:Այս բոլորն ընդլայնում են սոցիալական գիտակցությունը և սոցիալական իմացության զարգացումը:

Նախադպրոցական տարիքի երեխաների հետ հաճախակի են կազմակերպվում զանազան խաղեր:

Խաղ«Մեր փողոցը»

Խաղից առաջ դաստիարակը զրույց է անցկացնում երեխաների հետ:Այդ ընթացքում երեխաները հիշում են իրենց տեսածը փողոցում:

Տրվում են հետևյալ հարցերը .

.Ի՞նչ են տեսել փողոցում

.Ինչպիսի՞ շենքեր,մեքենաներ

.Ի՞նչն էր կարգավորում փողոցի երթևեկությունը

.Ինչու՞ են փողոցում ծառեր,ծաղիկներ աճեցնում

Հարկավոր է աշխատանքն ավարտել 10 րոպեում:

Խաղի ընթացքում միմյանց հետ շփվելու են առանց խոսքի՝ շարժումներով և միմիկայով:

Խաղի համար երեխաներին տրվում են երկրաչափական պատկերների հավաքածուներ,սոսինձ,մատիտներ:

Դաստիարակը խումբը բաժանում է 4-5 ենթախմբերի:Յուրաքանչյուր ենթախմբի հանձնարարվում է երկրաչափական պատկերներից ստանալ շենքերի,ծառերի,մեքենաների ,լուսակրի ,մարդկանց պատկերներ:

Դաստիարակը զգուշացնում է,որ աշխատանքը պետք է ավարտել 10 րոպեում:Առաջադրանքը կատարելուց հետո յուրաքանչյուր ենթախումբ մագնիսական գրատախտակին փակցնում է ստացված պատկերները:Նախօրոք պետք է գրատախտակին ամրացված լինի փողոցի ուրվագիծը:Խմբի անդամները միմյանց ցուցադրում են ստացված պատկերները և տեղադրում փողոցի համապատասխան մասերում:

Բացի նպանատիպ թեմատիկ խաղերից,մեր մանկապարտեզում կազմակերպվում են նաև ազգային խաղեր և խաղիկներ:

Եզրակացություն

1 Համակարգված աշխատանքի շնորհիվ նախադպրոցական տարիքի երեխաները ձեռք են բերում բազմակողմանի գիտելիքներ:Գաղափար են կազմում ,տոների,տոնակատարությունների,ծեսերի մասին:Խորապես տեղեկացված են յուրաքանչյուր տոնի խորհրդին և նշանակությանը:Տարբերում են ազգային տոները միջազգայինից:

2 Ներկայացվել է խաղի,որպես առաջատար գործունեության դերը նախադպրոցականի կյանքում:Նախաֆպրոցական տարիքում առաջատար է խաղային գործունեությունը,քանի որ խաղը առավելագույնս նպաստում է սոցիալական փորձի,մասնավորապես,սոցիալական դերերի և հարաբերությունների յուրացմանը